



Վահան Թորոպենց

Նոր Բյուզանդիոն

2

ՊԱՏԿԵՐ

Տյուզյան ամիրանների բոսֆորահայաց ապարանքի դահլիճը, կահավորված նոր-բյուզանդական ոճով: Վարագույրը բացվելիս երկու ծառա դահլիճում զբաղված են մաքրությամբ:

Ա. ԾԱՌԱ. Սարսափելի է եղելությունը: Երկու օրվա մեջ Տյուզյան ամիրաններից ոչ ոք չմնաց:

Բ. ԾԱՌԱ. Առաջին անգամ չէ, որ օսմանյան մայրաքաղաքը ականատես է լինում այսպիսի եղեռնագործությունների:

Ա. ԾԱՌԱ. Ավերվեց Տյուզյանների այս շքեղ ապարանքը: Կանայք չեն կարող կանգուն պահել այն: Նահատակների թաղումը ե՞րբ է կատարվելու:

Բ. ԾԱՌԱ. Երեկ գիշեր Բոսֆորի ձկները խնջույք սարքեցին մեր ամիրանների դիակներով:

Ա. ԾԱՌԱ. Արդյոք կմնա՞նք մենք այս ապարանքում ամիրանների նահատակությունից հետո:

Բ. ԾԱՌԱ. Երևի ոչ:

Ա. ԾԱՌԱ. Եթե չենք մնալու, գլխներիս ճարը տեսնենք: Այսքան տարի այստեղ գերություն արինք և մի արծաթ չունենք մեր գրպանում:

Բ. ԾԱՌԱ. Ի՞նչ անենք:

Ա. ԾԱՌԱ. Պետք է մտածել:

Մտնում են մայրը, Հաշի Չելեբի, Տիգրան և Պողոս ամիրաները: Երկու ամիրաները բռնած են մոր թևերից: Մայրը լաց է լինում:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Այսօր, մեծ տիկին, լացից առաջ մենք պարտական ենք մտածել մի ուրիշ բանի մասին:

ՄԱՅՐԸ. Ի՞նչ բան, ամիրա: Մի՞թե ավելի կարևոր բան կա ինձ անելու, քան խորախոր սուգը:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Տյուգյանների տան պատիվը, մեծ տիկին, ահա մեծ բանը: Սպանությունը, ոճիրը չեն աղարտի ընտանեկան պատիվը, բայց եթե խայտառակ ձևով ծախսեն այս տան կահ-կարասիները... ահա մեծ, ահավոր բանը:

ՄԱՅՐԸ. Այդ եղեռնագործությունից հետո կարող են կրակի տալ Տյուգյանների ողջ ապարանքը: Իմ որդիների գլխատումից հետո հարկավոր չեն ո՛չ ապարանք, ո՛չ աղամանդ:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Հարգում եմ ձեր վիշտը, մեծ տիկին, զգում եմ ցավի թույնը, որ սողոսկում է ձեր մայրական սիրտը, բայց կա մի ուրիշ մեծ բան, մեծ տիկին. ողջ մի սերունդի գոյության հարցն է դրված մեր առաջ: Պետք է փրկել այդ սերունդի հավատքը, փրկելու համար սերունդը:

ՄԱՅՐԸ. Փրկեցեք, ինչպես որ կամենում եք, ամիրա:

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ. Մեր տարաբախտ ամիրաները իրենց գլխատումից առաջ, հավատում եմ, մտածեցին իրենց կրոնի փրկության համար:

ՊՈՂՍՍ ԱՄԻՐԱ. Պետք է անցնել գործի անմիջապես, որովհետև արդեն մոտ է ժամանակը: Շուտով այստեղ կլցվեն անհավատները:

ՄԱՅՐԸ. Արեք, ինչպես հարմար եք դատում: Ինձ միայն մնում է արցունք թափել և աղոթել:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Սպասում ենք ձեզանից, մեծ տիկին, ձեր հասակի վայել քաջասրտություն: Խոնարհվում եմ ձեր սպիտակ մազերի առաջ: Ներեցեք ինձ:

ՄԱՅՐԸ. Ամեն ինչ կորած է, ամիրա, բայց օրհնված կլինեք, եթե... եթե կարողանաք փրկել մեր հավատքը: (Սպասելով և մնալով անպատասխան) Ինչի՞ մասին եք մտածում, ամիրա:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Մատուռի մասին, մեծ տիկին: Անհրաժեշտ է, որ մատուռի գոյությունը գաղտնի պահվի: Մատուռի բացվելը նշանակում է վնասել Օսմանյան կայսրության սահմաններում ապրող հայ կաթոլիկության:

ՄԱՅՐԸ. Ի՞նչ եք մտածում անել:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Մեծ պահարաններից մեկը պետք է բերել և դնել այս մատուռի դռան առաջ՝ զերծ պահելու համար նշմարվելուց:

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ. Առանց այդ էլ մատուռի դուռը աննշմարելի է, ամիրա:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Զննում է դուռը՝ բաց անելով և փակելով: Մատուռը գետեղված է դաճիկի խորքում՝ փոքրիկ, պատի հետ նույնացած, դռնով, բայց ամբողջ պատը բաժանվում է երկու մասի և աչ ու ձախ կողմերի վրա բացվելով՝ փոքրիկ մատուռը կազմում է դահլիճի շարունակական մասը:) Այնուամենայնիվ անհրաժեշտ է զգույշ լինել: Օսմանյան կայսրության ամենախիստ օրենքներից մեկն է կաթոլիկ պաշտամունքի արգելումը: Իսկ մենք այս մատուռում արած գաղտնի պաշտամունքով գործել ենք կայսրության օրենքի և կրոնի դեմ:

ՊՈՂՐՍ ԱՄԻՐԱ. Անհրաժեշտ է անել այդ անմիջապես (դուրս):

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Ես խոսել եմ մի հայ վաճառականի հետ, որ անպայման նա զնի այդ պահարանը և թողնի իր տեղում:

ՄԱՅՐԸ. Ատում եմ կենդանի մարդկանց: Ներեցե՛ք ինձ, ամիրա, խոսում եմ հոգու խորքից:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Հասկանում եմ ձեզ, մեծ տիկին, արդար է ձեր ատելությունը: Մարդկային է սերը, մարդկային է և ատելությունը:

ՄԱՅՐԸ. Ես կարծում էի, որ երեկվա ոճիրներից հետո պետք է ամեն ինչ շարժվեր, պետք է ամեն ինչ փուլ գար:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Դեռևս ժամանակ կա, մեծ տիկին:

ՄԱՅՐԸ. Լռում եմ, երբ դեռ դիակները տաք են և արյունը պղպշում է: Միթե ամեն ինչ սատելո՞ւց հետո պիտի շարժվի: Ժամանակը կույ է տվել սրանից ավելի խոշոր ոճիրներ:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Եթե սրանից ավելի խոշոր ոճիրները կույ են գնացել ժամանակի անդունդում, ինչո՞ւ...

ՄԱՅՐԸ. Ձեր գործին նայեցեք, ամիրա: Վիշտը մոլորեցնում է ինձ: Միայն խնդրում եմ թույլ չտալ, որ ամբարիշտ Իսխել հրեան զնի Տյուզյանների կահ-կարասիները:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Անխուսափելի է դա: Իսխելը հարուստ է և ոխերիմ թշնամի նահատակներին: Նրանց գլխատումը դավադրելուց հետո անպայման կզնի և նրանց կարասիները:

ՄԱՅՐԸ. (Հառաչում է:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Կարգադրել եմ, որ մեր բարեկամները զնեն ձեզ համար հարգելի և հիշատակելի իրեղենները:

ՄԱՅՐԸ. Ինչքան ծանր են այս բոլորը մոր համար:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Չգում են իբրև հայր, մեծ տիկին:

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ. (Ներս) Բերում են պահարանը: (Երկու ծառաները բերում են մեծ պահարանը, դնում են մատուռի դռան առաջ և գնում են դուրս:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Այսպես լավ է: (Լռություն) Պիտի լինել սառնարյուն և քաջասիրտ:

ՀԱՐՍԸ. (Սներ հագած և արցունքոտ աչքերով մտնում է և չոքելով սկեսորի առաջ) Մայր:

ՄԱՅՐԸ. Ոչ ոքի այնքան իրավունք չի տրվել արցունք թափելու, որքան քեզ, աղջիկս: Բայց հավատա աստծո վրեժխնդրության:

ՀԱՐՍԸ. Սուտ է, մայր, ամեն ինչ սուտ է, և՛ աստվածը, և՛ նրա պատվիրանները: Այսպիսի՛ ոճիր: Օսմանյան կայսրությունը չի ունեցել նման հավատարիմ ծառաներ, ինչպես իմ ամուսինը և տագրերը: Գլխատեցին նրանց:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Օսմանյան կայսրությունը ինքը խորտակեց իր ամենահզոր սյուները: Հավատացե՛ք աստծո արդարության, աղջիկս:

ՀԱՐՍԸ. Երբե՛ք, երբե՛ք:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Ձեր չհավատալու համար աստվածը կարող է հրաշքներ գործել:

ՀԱՐՍԸ. (Լալիս է) Մենք հրաշք չենք տեսնի, ամիրա:

ՍՊԱՍԱՎՈՐ. (Ներս մտնելով) Օսմանյան արքունիքի արարողապետը, սենեկապետը, թարգմանը և նազիրներ:

ՄԱՅՐԸ. Գնանք աղջիկս, և աղոթենք սուրբ կույս Մարիամին:

Գնում են դահլիճի աջ դռնով: Հաջի Չելեբի, Պողոս ամիրա և Տիգրան ամիրա աճապարում են ընդունել նրանց: Ներս են մտնում արարողապետ, սենեկապետ, թարգման և երկու պալատական: Ամիրաները թրքական խոր բարևով ընդունում

են նրանց:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Տյուգյաններից ո՞չ որ չկա այստեղ մեզ ընդունելու, Հաջի Չելեբի: Պատերի՞ն պետք է կարդանք սուլթանական ֆերմանը:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Ասածո կամքովը և կամքովը մեր փառապանծ արքայի Տյուգյաններից ոչ մի տղամարդ այլևս չի կարող լսել սուլթանական ֆերմանը:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. (Հեզնական ծիծաղում է:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Նրանք իրենց գլուխներով քավեցին իրենց մեղքերը, տեր իմ: Տյուգյանների ապարանքում միայն կանայք կան, և կանայք իմացել են ֆերմանի բովանդակությունը: Գոհ են արքայական կարգադրությունից:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Դուք նշանակված եք նրանց գործերի փոխանորդ, այնպես չէ՞:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Ներեցեք, տեր իմ, մենք այստեղ գործադրելու ենք Արքունիքի հրամանները միայն... (Ներս են մտնում Հալետ էֆենդի, Իսխել և զանազան ազգերի մի քանի վաճառականներ:) Մենք սպասավորներն ենք Օսմանյան կայսրության շահին և փառքին: (Չելեբու աչքերը հանդիպում են Իսխելին և Հալետին:) Սպասավորությունը կայանում է նրանում, որ հաջողենք ավելացնել նրա շահերը և փառքը: Մենք այս իմաստով ծառայել ենք, ինչպես և Տյուգյանները ծառայեցին այդպես... (Պաշտոնատարներից անախորժ արտահայտություն, Չելեբին անմիջապես շարունակում է) մինչև իրենց սայթաքումը և անկումը:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Դուք անգի՛ր եք արել ձեր ճառը, Հաջի Չելեբի:

ԻՍԽԵԼ. (Մեղմ շնական ծիծաղ:))

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Խստիվ աչքերը չռելով Իսխելի վրա) Մենք շատ ենք եփված, տեր իմ, պետական ծառայության դժվարին գործերում: Մեկ օրից մյուսը կարելի չէ սովորել պետական գործը: Կայսրությունը թեև հիմնված է նորին վեհափառության, մեր օգոստափառ արքայի ուսերի վրա, բայց նրա ծանր բեռը

թեթևացնում են կայսրության հավատարիմ ծառաները:

ՀԱԼԵՏ. Իսկ ոչ-հավատարիմ ծառաները կպատժվեն Տյուգյանների նման:

ԻՍԽԵԼ. (Ուրախության արտահայտություն:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Այո, պետք է պատժվեն անհավատարիմները, բայց մարդիկ կան, որոնք կայսրությանը այնքան մեծ ծառայություններ են մատուցել, որ նրանց բոլոր մեղքերը, միասին կշռած, ավելի թեթև են, քան ուրիշների ծառայությունները:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. (Թարգմանին) Կարդացեք սուլթանական ֆերմանը:

ԹԱՐԳՄԱՆ. (Առաջ գալով և բանալով կանաչ ժապավենով կապված հրովարտակը՝ կարդում է) Սուլթան և որդի սուլթանների, սուլթան խանը դագի, հաջորդ փառավոր մարգարեի, թագավոր երկու աշխարհաց, ստվեր աստծո ի վերա երկրի, օգոստափառ կայսր և խալիֆա, հրամայում է, որ այս ֆերմանս ձեզ հասնելուն հայտնի լինի, որ արքունի փողերանոցիս պետ Տյուգյանների՝ զեղծարարության պատճառով գլխատումից հետո աճուրդի են հանվում նրանց ողջ կահ-կարասիքը: Աճուրդը տեղի պիտի ունենա 24 ժամվա ընթացքում Տյուգյանների ապարանքում:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Կանչեցե՛ք մունետիկը:

ՄԵՆԵԿԱՊԵՏ. Պատրաստ է, տեր իմ:

Մտնում է մունետիկը:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Աճուրդի դիր ապարանքում գտնված կահ-կարասիները, բացի ընտանիքի անձնական իրերից:

ՄՈՒՆԵՏԻԿ. Պատրաստ եմ, տեր իմ: Աճուրդի է դրվում այս մարմարյա մեծ սեղանը իր ամբողջ կարգ ու սարքով:

ԻՍԽԵԼ. 1 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 1 նսկի:

ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ. 2 նսկի:

ԻՍԽԵԼ. 5 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 5 նսկի... (Լռություն) 5 նսկի: (Լռություն) Ծախված է: Աթոռները և բազկաթոռները:

ԻՍԽԵԼ. 10 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 10 նսկի: (Լռություն) 10 նսկի: Ավելացնող չկա՞. (Լռություն) Տասը նսկի: (Լռություն) Ծախված է: Վարագույրները:

ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ. 3 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 3 նսկի:

ՄԻ ՀՐԵԱ. 4 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 4 նսկի:

ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ. 10 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. (Ոգևորված) 10 նսկի:

ՄԻ ՀՐԵԱ. (Ապշած) 11 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 11 նսկի (Լռություն) 11 նսկի:

ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ. 15 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 15 նսկի (Լռություն):

ՄԻ ՀՐԵԱ. (Քաշվում է մի կողմ):

ՄՈՒՆԵՏԻԿ. 15 նսկի: (Լռություն) Ծախված է: (Մոտենալով պահարանին):
Պահարանը:

Բոլոր ամիրաները դժգունում են, միայն Հաջի Չելեբին սառնարյուն է:

ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ. 1 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 1 նսկի:

ԻՍԽԵԼ. 15 նսկի:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. (Աչքերը չռում է Իսխելի վրա):

ՄՈՒՆԵՏԻԿ. 15 նսկի, 15 նսկի: (Իսխելը և Հալետը փսփսում են:)

ՄԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆ. 20 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 20 նսկի:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Տեղը փոխելով՝ նստում է մի ուրիշ տեղ և սկսում է սառնարյուն
միրուքը շփել:)

ԻՍԽԵԼ. 50 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 50 նսկի:

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ. 51 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 51 նսկի:

ԻՍԽԵԼ. 70 նսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 70 նսկի: (Լռություն) 70 նսկի: (Լռություն) Վերջին անգամ՝ 70
նսկի: (Լռություն) Վերջին անգամն է:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Սա շատ հին պահարան է: Տալիս եմ 100 սսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. (Ոգևորված) 100 ոսկի:

ԻՍԽԵԼ. 200 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 200 ոսկի: (Լռություն) 200 ոսկի: (Լռություն) Վերջին անգամ՝ 200 ոսկի: (Լռություն) Ծախված է:

ԻՍԽԵԼ. (Անցնելով Հաջի Չելեբու առաջից, կծու քննադատով մոտենում է պահարանին, տնտղում և ապա գնում է դուրս:)

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Մի՞թե այդքան արժեքավոր էր այդ պահարանը, Հալետ Էֆենդի:

ՀԱԼԵՏ. Ապրանքների լավագույնը հրեաներն են ճանաչում, տեր իմ:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Երևի դա հնություն է:

ԻՍԽԵԼ. (Մտնում է երկու բեռնակրի հետ միասին) Տարեք այս պահարանը իմ տունը: (Բեռնակիրներն սկսում են տանել:)

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ինչպե՞ս իմացար, Իսխել, որ այդ պահարանը այդքան արժեքավոր է:

ԻՍԽԵԼ. (Խոնարհվելով) Վաղուց էի տեսել այդ պահարանը (դառնալով Հաջի Չելեբուն) երջանկահիշատակ Տյուգյանների ապարանքում, տեր իմ:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Եվ սպասում էիր այս րոպեին, այնպես չէ՞:

ԻՍՊԵԼ. Բայց, ավա՛ղ, կայսրությանը վնասելու այս դժբախտ պարագաներից հետո:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Շարունակի՛ր, մունետիկ, շուտ վերջացրու:

ՄՈՒՆԵՏԻԿ. Ջահը:

ՀԱԼԵՏ. 50 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 50 ոսկի: (Լռություն) 50 ոսկի: (Լռություն:)

ԻՍԽԵԼ. (Պահարանը տարվելուց հետո՝ պահարանի դրված տեղի պատի վրա փնտրտուքներ է անում:)

ՄՈՒՆԵՏԻԿ. Վերջին անգամ՝ 50 ոսկի: (Լռություն) Ծախված է:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Դուրս:)

ՄՈՒՆԵՏԻԿ. Արևելյան գորգերը:

ՄԻ ՀՐԵԱ. 2 000 ոսկի:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Ներս է գալիս մի փոքրիկ տուփով:)

ՄՈՒՆԵՏԻԿ. 2000 ոսկի: (Լռություն) 2000 ոսկի: (Լռություն) Ծախված է:

ՄԻ ՀՐԵԱ. (Էծան գնելու համար ձեռքերն է շփշփում:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Տուփը դնելով սեղանի վրա) Սա ամենից արժեքավորն է Տյուգյանների ապարանքում:

ԻՍԽԵԼ. (Առանց ուշադրություն դարձնելու Հաջի Չելեբու խոսքերին՝ պատի վրա փնտրտուքները շարունակում է:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Աղամանդներ և զանազան գոհարեղեններ են ծախվում, Իսխել էֆենդի, չեք կարող անտարբեր լինել:

ԻՍԽԵԼ. Ես հնարավորություն չունեմ մտածելու ի՞նչ ունեցած աղամանդների ու գոհարեղենների մասին: Չեմ ցանկանում:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Հա՛, հա՛, հա՛, զարմացնում եք, ապշեցնում եք դուք ինձ:

ԻՍԽԵԼ. Կարող է պատահել:

ՄՈՒՆԵՏԻԿ. (Խոշոր մարգարիտների մի շարան, որոնց մեջտեղում փայլում են ադամանդներ և սուտակներ՝ բռնում և բարձրացնում է վեր) Ահավասիկ:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. (Ձեռքը երկարում է:)

ՄՈՒՆԵՏԻԿ. (Հանձնում է շարանը արարողապետին:)

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ի՛նչ հարստությունների են տիրացել Օսմանյան կայսրության հավատարիմ ծառաները:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. Արդար միջոցներով այսքան հարստություն...

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Միայն արդարությունն է վարձատրվում, տեր իմ:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ուրեմն դուք կարծում եք, որ Տյուգյանները արդա՞ր էին:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Եթե անարդար էին, նրանք քավեցին այն իրենց արյունով, իսկ եթե պատմությունը ցույց տա, որ արդար էին...

ՀԱԼԵՏ. Օսմանցիների սուլթանը անարդար չի կարող լինել:

ԻՍԽԵԼ. (Մոտենալով) Արդար է մարգարեի հաջորդը:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Արդար է մարգարեի հաջորդը, բայց նրա լսողությունն ու տեսողությունը կախված են ուրիշներից:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Հաջի Չելեբի, ինչպես երևում է, դուք ցանկանում եք մարտիրոս դառնալ:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Մենք բոլորս էլ գոհաբերության համար ենք ապրում:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ծախի՛ր այս հրաշալի շարոցը, մունետիկ:

ՄՈՒՆԵՏԻԿ. (Առնելով շարոցը՝ վեր է բարձրացնում և լույսի տակ խաղեր է անում) Մարգարիտների, ադամանդների և սուտակների մի շարոց: (Լռություն:)

ԻՍԽԵԼ. (Էլի մոտենում է մատուռի դռան:)

ՄՈՒՆԵՏԻԿ. Մարգարիտների, աղամանդների և սուտակների շարոց:

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ. 25 000 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 25 000 ոսկի:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Վերջապես խզվեց ձեր լռությունը, Տիգրան ամիրա:

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ. (Խոնարհվելով) Լսում էի, տեր իմ:

ՄՈՒՆԵՏԻԿ. 25 000 ոսկի:

ՀԱԼԵՏ. 30 000 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 30 000 ոսկի:

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ. 40 000 ոսկի: (Ոտքի կանգնելով և խոնարհվելով արարողապետի առաջ) Ներեցե՛ք, տեր իմ:

ԻՍԽԵԼ. (Մոտենալով մունետիկին և շարոցը տնտղելով) Երբ Պողոս ամիրան ցանկանում է մի բան գնել, միայն ձկնորսները կարող են չհասկանալ նրա արժեքը: 50 000 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 50 000 ոսկի, 50 000 ոսկի: (Լռություն:)

ԻՍԽԵԼ. (Մոտենում է դեպի մատուռի դուռը:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Ետ բերելու համար) 60 000 ոսկի:

ԻՍԽԵԼ. (Անմիջապես ետ է գալիս, և տնտղում է շարոցը:)

ՄՈՒՆԵՏԻԿ. 60 000 ոսկի:

ԻՍԽԵԼ. (Հաջի Չելեբու վրա չոելով աչքերը և հեզնական քնծիծաղով) 75 000 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 75 000 ոսկի:

ԻՍԽԵԼ. (Մոտենում է դեպի մատուռը:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. 80 000 ոսկի:

ԻՍԽԵԼ. (Առանց ետ դառնալու) 100 000 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 100 000 ոսկի: (Լռություն) 100 000 ոսկի: (Լռություն) 100 000 ոսկի
(Լռություն) Վերջին անգամ: 100 000 ոսկի: (Լռություն) Ծախված է:

ԻՍԽԵԼ. (Ետ գալով, առնում է շարոցը և խոնարհությամբ երկարելով
արարողապետին) Խոնարհությամբ և երախտագիտությամբ նվիրում եմ այս
չնչին իրը նորին օգոստափառ կայսեր արարողապետին:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ապրի՛ս, հավատարիմ և հլու ծառա: Բայց արքունի
սպասավորները ոչինչ չեն տանի իրենց հետ այս ապարանքից:

ԻՍԽԵԼ. (Չարամիտ մի հայացք դեպի Հաջի Չելեբին և հերթով մյուս
ամիրաներին, խոնարհվելով և ետ գնալով՝ մոտենում է մատուռի դռան:)

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ծախի՛ր մնացածները, մունետիկ:

ԻՍԽԵԼ. (Ճանկոտտելով պատը՝ բաց է անում մատուռի դուռը) Ա՛, այստեղ ուրիշ
հարստություններ կան, տեր իմ: (Մտնում է ներս:)

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ. (Գաղտնի կերպով փախչում է դուրս:)

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ. (Դողում է դժգունաձ:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Աննկարագրելի սառնասրտությամբ միրուքն է շփում և նայում
անորոշ ուղղությամբ:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ. Երևի պահված է հարստությունը:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. (Գազազած) Նոր հանցանքներ են բարդվում դիակների վրա:
(Հաջի Չելեբուն) Ի՞նչ է այդ, Հաջի Չելեբի:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Մենք միասին ենք ականատես լինում առաջին անգամ, տեր
իմ:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Անծանոթ է ձեզ այդ սենյակը:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Բոլորովին անծանոթ:

ՀԱԼԵՏ. Այս տան այդքան մոտիկ անձնավորություն և անծանոթ:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Այս տան ներքին ընտանեկան և առևտրական գործերին դուք
Էիք ավելի ծանոթ, Հալետ Էֆենդի, օգոստափառ սուլթանը ձեր ցուցմունքներով
գլխատել տվեց Տյուգյաններին:

ՀԱԼԵՏ. Իմ գիտցածի չափով դուք ևս տեղյակ էիք հանցավորների գործերին:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ինչ որ էլ լինի, պահված է հարստությունը:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Ուրախ եմ, որ գաղտնիքը պարզված է, և չի տուժի
կայսերական գանձարանը:

ԻՍԽԵԼ. (Ներսից բաց է անում մատուռի պատերը, աչ ու ձախ կողմերի վրա:
Մատուռը նույնանում է դահլիճի հետ: Մատուռի բոլոր մոմերը վառված են:
Տաճարի ֆոնում երևում է ս. կույս Մարիամի մեծադիր նկարը, տաճարի վրա՝
պատարագի բոլոր սարքը: Տաճարի առջև ծնկի են եկած մայրը և հարսը սևեր
հագած և կաթոլիկական վարդարանը ձեռքներին, երկուսն էլ մրմնջում են
«Ողջույն քեզ, ս. կույս Մարիամ» երգը: Պատերը բացվելուց հետո՝ նրանք
անտարբեր շարունակում են երգը: Մատուռի աչ ու ձախ պատերի վրա կախված
են Քրիստոսի խաչելության մեծադիր բրոնզե արձանները, առաջները վառվում
են մոմերը: Իսխելը ամբողջ մատուռը բանալուց հետո սկսում է մի շնական և
երկար ծիծաղ:)

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Եկեղեցի...

ՀԱԼԵՏ. Պարզվում է ամեն ինչ:

ԻՍԽԵԼ. Կաթուղիկ եկեղեցի: Կաթուղիկ պաշտամունք:

ՍԵՆԵԿԱՊԵՏ. Պիտի լուր տալ նորին օգոստափառության:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Պիտի գլխատել և կանանց:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Սրա հեղինակները պատժված են, տեր իմ:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Պիտի կրկին պատժել:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Թեթև ժպիտով) Պիտի վերագլխատել, այո՛, տեր իմ:

ԻՍԽԵԼ. (Բարձրանում է տաճարը, առնում է սկիհը, բերում է ներքև և արնամարիական արտահայտությամբ մոտենալով Հաջի Չելեբուն ու բարձր հռիռալով) Այս ի՞նչ է, հը՞, թքամա՞ն: (Թքում է սկիհի մեջ)

ՀԱԼԵՏ. (Հռիռում է:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Շառաշուն մի ապտակ է իջեցնում Իսխելին:)

ԲՈԼՈՐԸ. (Խառնվում են իրար:)

ԻՍԽԵԼ. (Մի պահ շփոթվում և գայրույթի արտահայտություն է ստանում, բայց իսկույն քնծիծաղով խոնարհվում է արարողապետի և Հալետի առաջ): Ես վիրավորված եմ զգում, որ այդ կաթուղիկը անպատվում է Ձեզ:

ՀԱԼԵՏ. Շուտով սուլթանից հրաման ձեռք կբերեն քո գլուխը կտրելու անձամբ Խաթթը Հյումայունի առաջ: Երդվում եմ մարգարեի անունով:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Ձեր սուրը շատ է մաշվել իմ գլուխը կտրելու համար:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ձեր գլուխը կգնա, եթե դուք մատ ունեք այս գործում:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Մի մոռանաք, տեր իմ, որ այս ապարանքը Տյուզյան ամիրաների ապարանքն է:

ԻՍԽԵԼ. Այսպիսի մի մատուռ կարելի է գտնել և ձե՛ր ապարանքում:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Խիստ նայում է Իսխելին և չի պատասխանում:)

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Ուղարկեցե՛ք այս մատուռի ամբողջ հարստությունը հայոց պատրիարքարան: Մունետիկ, աճուրդի դիր և այս ապարանքը:

ՄՈՒՆԵՏԻԿ. Ծախսո՛ւ է ապարանքը, բոսֆորահայաց այս շքեղ բնակարանը:

ԻՍԽԵԼ. 250 000 ոսկի:

ՄՈՒՆԵՏԻԿ. 250 000 ոսկի: (Լռություն) 250 000 ոսկի: (Լռություն) 250 000 ոսկի: Վերջին անգամ՝ 250 000 ոսկի: (Լռություն) Ծախված է:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Պիտի ուղարկել այսօր և եթե եկեղեցու բոլոր հարստությունը հայոց պատրիարքարան: (Գնում է:)

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Ինչքա՞ն ժամանակ եք տալու, տեր իմ, կանանց տեղափոխելու այս ապարանքից:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. Այսօր և եթե պետք է դուրս գան: Ապարանքը պատկանում է Իսխելին:

ԻՍԽԵԼ. (Հռոհում է:)

ՀԱԼԵՏ. Հաջի Չելեբին լավ է իմանում սեփականության իրավունքը, տեր իմ:

ԻՍԽԵԼ. Վճարել եմ ես դրա համար իմ ճակատի քրտինքները:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ: Դուք ձեր քրտինքները վճարեցիք ոչ թե ապարանքին, այլ իմ ապտակին:

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ. (Դուրս: Նրա ետևից դուրս են գնում սենեկապետը, Ա. թարգմանը և երկու պալատականներ:)

ԻՍԽԵԼ. (Գազազած) Լսեցեք դուք Հալետ Էֆենդիի երդումը:

ՀԱԼԵՏ. Երդվում եմ՝ դուք ետ կստանաք այդ ապտակը ձեր գլխով:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. Տյուգյանները շատ երիտասարդ և միամիտ էին, Հալետ Էֆենդի: Ես 40 տարեկան եմ:

ՀԱԼԵՏ. 40 գլուխ էլ ունենաք, վաղը չպետք է լինի նրանցից և ոչ մեկը:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Ջղային շարժումներով միրուքն է շփում:)

ԻՍԽԵԼ. Մի մոռանաք, ամիրա, որ այս ապարանքը ինձ է պատկանում, և ձեր ներկայությունը հաճելի չէ:

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ. (Գազազած աչքերով և քթերի ծակերը լայն-լայն բացած՝ նայում է Իսխելին, ապա մտնում է մատուռը և Տյուգյանների մոր թևից բռնելով՝ բարձրացնում է, իսկ հարսին՝ ձեռքից, և գնում են դահլիճի դռնից դուրս:)

ՄԱՅՐԸ. (Դուրս գալուց առաջ արցունքոտ աչքերով նայում է ամբողջ դահլիճին և լուռ հեռանում:)

ՀԱՐՍԸ. (Գլխիկոր և լալով հեռանում է:)

Նրանց հետևում են բոլորը, բացի Հալետից և Իսխելից:

ԻՍԽԵԼ. Իմ բոլոր ծառայությունների փոխարեն ես մինչև հիմա ոչինչ չեմ խնդրած ձեզանից: Պահանջում եմ հիմա Հաջի Չելեբու գլուխը:

ՀԱԼԵՏ. Երդվեցի մարգարեի անունով և կկատարեմ, բայց սուլթանին պետք է հասկացնել և ձեռք բերել գլխատման հրամանը:

ԻՍԽԵԼ. Գլուխը, Հալետ Էֆենդի, Հաջի Չելեբու գլուխը, թե ոչ չեմ կարող տանել կաթուղիկ սրիկայի ապտակը:

ՀԱԼԵՏ. Պետք է պատճառաբանել նրա գլուխը կտրելու պահանջը: Հաջի
Չելեքին արքունի գլխավոր սեղանավորն է: